

ԱՊՊԱ ապահովագրավճարի հաշվարկման մեթոդաբանությունը

ԱՊՊԱ գծով ապահովագրավճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Ապահովագրավճար = Բազային ապահովագրավճար x Բոնուս-Մալուս գործակից x Պայմանագրի ժամկետից կախված կարգավորիչ գործակից

Բոնուս-Մալուս գործակցի հաշվարկման կարգի և Բոնուս-Մալուս դասերին տրվող գործակիցների չափերի, ինչպես նաև Պայմանագրի ժամկետից կախված կարգավորիչ գործակիցների վերաբերյալ տեղեկատվությունը կարող եք գտնել **RL 1-001 կանոններում**:

Բազային ապահովագրավճարի տարեկան առավելագույն սահմանաչափը տվյալ ապահովադրի կողմից 2017 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի գծով վերջին անգամ կնքված ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի հաշվարկման ժամանակ կիրառված բազային ապահովագրավճարի չափ գումարած 3,000 ՀՀ դրամ է, իսկ այդպիսի պայմանագրի բացակայության դեպքում՝ 41,000 ՀՀ դրամը: